Պարույր Սևակ

Ներկա-բացակա

Ներկա են ոտքերըս. ինքնաշարժ քայլում են:
Ներկա են աչքերըս. երևի փայլում են:
Բացական հայացքս, այդ նա է. ես նայում
Եվ սակայն չեմ տեսնում. ոչինչ չի հմայում:
Ներկա է և մաշկըս. կարծես թե մրսում եմ:
Ծածկ ունեմ և չունեմ. տան մեջ էլ դրսում եմ:
Գարուն է - գարուն չէ. բացակա - ներկա է:
Բացական աստղերն են:
Բացական լուսինն է:
Բացական քամին է, շարժումը և... ինքը,
Որ տերն է կարոտիս:
Կարոտս ներկա է...
Թարմ օդից զարթնում են ռունգերըս, բայց իզո՛ւր.
Իմ շնչած օդից է բացակա իր շունչը:
Ձգում եմ ոգնու պես փշապատ մտքերըս,
Բայց նրանք վերստին կծկըվում-գնդվում են:
Ա՛խ, լիներ մի քնքուշ-կոպիտ ձեռք. ինձ բացեր,
Ինչպես որ գրտնակով բացում են խմորը,
Ինչպես որ բացում են բառի խոր իմաստը,
Ինչպես որ... չե՞ն բացում, ոգնուն լոկ ճխլում են:
Ա՛խ, լիներ... լինեին հաստ մեխեր, ժանգոտա՛ծ:

Այն խաչը,
Որին մենք կամովին գամվել ենք,
Մեխերի՛ պետք ունի,
Ժանգոտա՜ծ մեխերի:
Մեխն ի՜նչ է, անխիղճնե՛ր, մեխն ի՜նչ է.
Էժան է, հեշտությամբ ճարվում է:
Մի քանի մեխն ի՜նչ է.
Ընտրեցեք հաստերը,
Որ ցավը բարակի ու... հատվի:
Հերի՜ք է...

20.III.1964թ.
Դիլիջան